ՄԱՅՐ ԱԹՈՌ

Երկարատև և այս տարի սովորականից խիստ և ցրտաշունչ ձմռանից ձանձրանալով, մանաւանդ քաշած թունաւորութիւնից և—տկարութիւնից յետոյ, Փետրվարի քսանին աղդիս Վեհափառ Հայրիկը կարճ ժամանակով օդափոխութեան համար մեկնեց Աղէքսանդրապոլ և Սանահին, որտեղից վերադարձաւ Մարտի մէկին։ Փետրուար ամսի վերջին տաք օրերի շնորհիւ ձիւնն արդէն վերացել էր Ա-բարատեան դաշտից և եղանակն էլ բաւականին տաքացել։ Վեհափառը համեմատաբար բաւականին կազդուրուած, ցանկացաւ ս. Լուսաւորչի Վիրապնամտի տօնին ուխտ գնալ Խորվիրապ վանքը և ս. Էջմիածնից մեկնեց Երևան, բայց անձրևային եղանակն ու ճանապարհների վատութիւնն արգելք եղան Մերունեաղարդ Հայրապետի փափագանաց և նա ս. Լուսաւորչի տօնն Երևանում անցկացնելուց յետոյ, Մայր Աթոռ վերադարձաւ։

Ս. Էջմիածին վերադարձան Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը, Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեան և տ. Մեսրոպ ու տ. Մամբրէ վարդապետները, որոնցից վերջին երկուսը Թիֆլիզ էին գնացել տպարանական գործերով։



ՆԵՐՍԷՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

Մեր մտաւոր աշխարհահայեցողութեան վրայ ահագին ազդեցութիւն է թողնում պատմութեան ուսումնասիրութիւնը։ Լաւ, բազմակողմանի հմտութիւն ձեռք բերած պատմագէտը ոչ միայն պատմութիւնից իւր կեանքի և կենցաղի համար խրատներ է ընդունում, աղնուացնում իւր հոգին, նա միշտ կարող է նաև ապագայ դալիք